

Միջի բնակակից օտարները—
 բնիկ կամ եկեղոր— քաղաքական ե
 բնական պայմաններու նպաստաւոր
 դասաւորմանց շնորհիւ, աւելի լայն
 միջոցներ ունին քան ցոյց տկա
 (Շոր. Բ. էջ Ա. սխ. 41)

հայրը Անոր համար գլխաւոր արգելքը, խոչընդոտը կը ներկայանայ տուեալ երկրին լեզուն:

Չքաւոր, աղքատ ընտանիքի մը հայրը կ'անգրադառնայ իր կեանքին մէջ հանդիպած դժուարութեանց, և կուզէ, ու կը վճռէ որ գէթ իր զաւակներուն համար խնայուին այդ դժուարութիւնները:

Ազգ. վարժարանաց մէջ ջամբուած օտար լեզուի պաշարը անբաւական, իսկ մայրենի լեզուն ալ ընտանեկան բարբառ միայն կը նկատէ, ուստի այդ իսկ պատճառաւ իրեն համար կենսական նշանակութիւն չի կրնար ունենալ այդ լեզուին կորուստը: Այսպէս չխորհող բազմաթիւ հայրեր թեմանակի կորուստ, այսի յումպէտս վատնուած կը համարեն մայրենի լեզուն ուսուցումը:

Շատ յաճախ կը հանդիպինք մարդոց որոնք իրենց գործի ասպարէզին մէջ ունեցած ձախողանքը կը վերագրեն օտար լեզու չը գիտնալուն:

Դպրոցական պատանիներ. ապաւորուած իրենց ընտանեկան յարկին մէջ տեղի ունեցող խօսակցութիւններէն և ակնհայտօրէն վիճարանութեանց, թեքում մը, համարուած կը կոչեն նաեւ գէպի օտար վարժարանները, անոնց թարմ հոգիները սա թիւր կարծիքով կը լեցուի թէ՛ հայ լեզուն ապագայ մարդոց համար հաց հարելու միջոց չի կրնար ծառայել, և անա մատաղ սերունդի հոգիին մէջ անգաղաքար կը սաղմնաւորուի քարհամարանքը հայ հայրարարական մարտնչութեան հանգէպ և միւս կողմէ ալ պղտիկ տարածախօսութիւն և դժուարութիւն մը ազգային հարժաւրանի տնօրէնութեան կամ հայրարարական հետ, պատճառ կրկնայ որ հայ մանուկը խուլի հայ վարժարանէն և զոհոց դառնով, գտնազան եւ զարմանալիք բարեփոխական կեղծ քղամիդներու տակ ծածկուած մարդ որոնքնուն:

Ժամանակ մը վերջը հայ աշակերտին մատուց ախորժակ և հոգին կը խմորուի, կը կաղապարուի և կը թրծուի օտար քրտալին մէջ. և հայ նոր սերունդը անգիտակ իր ցեղին ոգրութեանը. որպէս ազգապրելու համար թափած անսպառ ճիւղերուն, ծնունդով օտարի մը պէս, կ'արհամարհէ և՛ լեզուն և զրականութիւնը և պատմութիւնը, իր ծնունդը ուրանալու գինով:

Իրենց հասարակական և նիւթական կացութեան բերումով հայ ազգի ծոցին մէջ տնտեսած երկու հակոտնեայ դասակարգեր, տարբեր իրենց ծնունդով և գաղափարային հակուսմանով, միեւնոյն գծադղ երեւոյթը կը յառաջանեն մեր ներքին կեանքին վրայ:

Աւերման մեր ազգային գոյապայքարին որդի յոյժ, և ո՛րպէս Ազգաւաճաքականութիւն ապրելու հիմնախարխիլը կը ներկայանայ ԵՐԿՐՈՐԻ դասակարգը, ՄԻՋԿՈՐԵԱՆԻՆ:

Այս երկրորդ շերտը, առաջին և երրորդ հաստիւններու միջև տատնուող զիրք մը ունի. անոր կեցուածքը անորոշ է թէ՛ և, սակայն, ան տակաւին իր հաւատքը կորսնցուցած է, անոր համար ԱՊԱՄԱՆ յուսահատական է:

(Շարունակելի) ՄԱՄԱԼՈՒՆԻ

Գրախօսական

Պարզեւ Ս. Սանտրապորժեան կը խօսի «Ուշիմութեան փորձերու արժէքին» այսինքն մարդկային միտքը չափելու մասին և շատ մը փորձերու պատմութիւնը կընէ հարց տալով թէ «Այս քննութիւնները ընդունին կարողութիւնները կը չափեն թէ ոչ ստացական կարողութիւնները»: Կարեւոր հարցեր հոգեբանին և չղաստարակին համար: Միեւնոյն ժամանակ չմոռնար մարմնական զարգացման չափը և միջավայրի ազդեցութիւններն ալ նկատի առնելով կ'եզրակացնէ որ թէ միջավայրի պատահութիւնները և թէ բնածին ընդունակութիւնը անհրաժեշտ են ուշիմութեան չափերուն մէջ:»

Նշանակութեան արժանի են նաեւ անխոնջ և աւելոր Տօքթ. Վահրամ Թորգոմեանի «Էջ մը հայ բժշկական պատմութեան համար» յօդուածը ի մասին Տիկին Սահակիա Սիւնեացի իշխանուհոյն իբրեւ հիմնադրելու ուրկանոցի մը և ուրիշ բարեգաղտական հաստատութիւններու Ե. և Զ. դարուն, և Կ. Յ. Բասմաճեանի համառօտ «Պատմութիւն Բժշկականութեան սկզբէն մինչև վերածնութիւն» ուսումնասիրութիւնը: Սա չափ օտարաց կը խօսի նաեւ այն հայ բժշկականութեան մասին, որոնք աջաբանական բժշկութեան ազդուած հայ բժշկականութեան հիմը դրած և ծաղկեցուցած են, ինչպէս Միսիթար Հիւրաքուն և Ամիրտովմիս Սամախլեան:

Չարլզ Կիւլեյեան միջ կը հրամայէ «Նորագոյն յառաջդիմութիւնները գիտութեան մէջ» խոսքը շահագրգռական և օգտաշատ աշխատութիւնը, նիւթ ունենալով մասնաւորապէս տարրաբանութեան, բժշկականութեան, աստղագիտութեան, բնագիտութեան մէջ տեղի ունեցող զգրութեան այն հսկայական թիւը, որ ամէն ապրի մեզի կը փոխանցուի որպէս ժառանգ: Միայն զիջին երկու ասորուան ընթացքին 85000 պէս տաղրութիւններ (pasente) առնուած են վաշտիկներէ մէջ տեսակ տեսակ գիտեցող համար: Ու տակաւին այս թիւէն զուտ մը մնա այն անհամար գիտերը, որոնց առաջնութիւնը չէ առնուած զանազան պատճառներով:

Դժբաղդար մեր նիւթը չը ներքին մանրամասնել բոլոր այն նութիւնները, որոնք ընդհանուր շահագրգռութեան արժանի են:

Նոյն նիւթին շարունակութիւնն է Տօքթ. Ս. Նաճարեանի «Բնականագիտութիւն» ու «Շողարձակ նիւթի» իր նկատմամբ երկարատեւութիւնը անոնց գործածութեան եւ զանազան օգտակարութեան նկատմամբ:

Հայկ. Տէյրմէնճեանի «Ակնարկ մը սերնդադիմութեան վրայ» հիմաւոր յօդուածը կենսական կարեւորութիւն մը կը ներկայացնէ՝ կենսաբաններու և բժշկաներու ուղղութեամբ թանկ, ուր մարդկային բնութեան, գաղտնիքը, որու և էջ ըլլններու միաւորումը, յօդուածը ու երկուքի բաժանումը, սերնդագիտութիւնն ու անոր հիմքը, ինչպէս և սկզբնականութիւնն ու հիմնաւորումը կ'ուսումնասիրուին:

Իրենց հիմնական ճշգրիտ կառուցուածքով:

Իմաստասիրական և ներհուն հմտութեան արդիւնքը կ'ստացարժեքութիւններ են Զաւէն Նալպանտեանի «Ելեքտրոնն ու Փրօֆ. Յ. Յ. Չաքմաքեանի «Ջրածնի իօններ» ու հոմոլոգի» մակագրով աշխատութիւնները, ուր հայ գիտունները իրենց գաղափարին թեւարկութեան մէջ չեն մոռնար նաեւ եւրոպական բառերու հայերէն հոմանիշները գրանելու կամ հնարելու ներդրութեան յանձնառու ըլլալ: Ասոնց նման զուտ գիտական երկերու գնահատութեան փորձ մը մեր հոգմանէ ձրի ենթադրութեան մը կատարմանէ անդին չափի անցնէր, սակայն և այնպէս մակերեսային ակնարկ մը բաւական է հասկնալու թէ նիւթը լուրջ ուսումնասիրութեան առարկայ դարձած է վարպետներու խորախօսանք գրելի տակ:

* *

Գովելի նախնաձայնագրութեամբ մը «Գիտական Ծարժում» գրքի մէջ ուսումնասիրութեան կցուած է զբացանկ մը որմէ օժտուած է հեղինակը իր խորագրութիւններուն մէջ, այսպէսով պատահութիւն ընծայելով հետաքրքիրներու անձամբ հետեւիլ լուսաբանուած նիւթերու աղբիւրին: Իսկապէս եւրոպական սովորութիւն մ'է այս և իր Դորոշ օգրութեան ունի:

Գալով լեզուական խնդրին ամէն կերպով վճիտ և դիւրահասկը նալի է այն ուսումնասիրուած նիւթին կարեւորութեան և պահանջներուն համաձայն, բացի այն կարգ մը նորոյն բառերէն որոնք, ինչպէս կը խոստովանին մեր գիտուն առաջնորդները, մեր գիտական լեզուն աղքատութեան հետեւանքով ժամանակի պէտք ունին կոկոնելու եւ հաջորդելու համար: Այս մասին շնորհաւորութեան արժանի են մեր գիտականները, որոնք այնքան միտք կը յոգնեցնեն և բաւարարներ կը թղթեն փոփոխական բառի մը ճիշտ և համարժէք նշանակութիւնը կազապարտելու հանրեմով, ուղղորդ ըլլալով միեւնոյն ժամանակ խժառուր և դժուարահնչիւն ձևերէ՝ լզուաշահալ:

Ամէն պարագայի տակ գերազանցապէս յանձնարարելի երկ մըն է Ամիրիկայի Գիտական Միութեան աշխատութիւնը և կարծէ որ հայ հասարակութիւնը ըստ արժանւոյն քաջալերէ գայն իր լայն մասնակցութիւնը բերելով անոր տարածման և սպառման և հետեւաբար գործին շարունակութեան համար աւելի ևս եռանդ ներշնչելով Գիտական Միութեան ազգասէր անդամներու որոնք անձնուրբութեան օրինակ կը հանդիսանան: Այն ժամանակ իրաւունք կ'ունենանք անկէ սպասելու գիտական աւելի և ալ աւելի հետաքրքրական ծանօթութիւններով լեցուն երկերու հրատարակութիւնը, որուն համար ամէն տեսակ մասնագիտական հմտութեան, ձեռներեցութեան ոգի և ցեղին վերածնութեան եռանդ չեն պակսիր անոնց:

Հայկ. ՄԱՄԱԼՈՒՆԻ Վերջ

ՄԱՐԵՅԱԼ ԺՈՓՐԻ ՄԱՆՈՒԱՆ ԱՌԹԻԻ

Պրանսան. կ'ողբայ իր գափնեկասակի գոհարներէն: Մարեշալ Ժոֆրու: Դիւմանսի և Պոլի անկարմանելի կորուստէն վերջ, ամենամիծ կորուստն է որ կուեննայ յաղթական հիշուան:

Եւ քնական է ժամանակի հոգովուով, պիտի ունենայ նորանոր կորուստներ ալ:

Եւ սակայն երկի Դիւմանսան ու Պոլի աչօր Ժոֆրու ողբացող իսկ վաղը ասոնց համարժէք դէմքեր ողբալու կոչուած Պրանսան, ունի սփոփանքի ու ինքնամիթարութեան բանաւոր պատճառներ տրուած ըլլալով որ յաղթական Պրանսայի ու կեղեիկի հորիզոնէն անհետացող փայլուն աստղերու պակասը լեցնող աստղեր անթիւ են ու անպակաս:

Անցնող տարին շատ աղիտաւոր եղաւ նաեւ Հայկերու համար, մեղմէ իսպառ խելով յոյժ աջաբառ ու պատկանելի դէմքեր և քնափան է որ ներկայ տարին ալ կոչուած է միեւնոյն ճակատագրական դեր կատարելու:

Ասիական անխառնափելիքէն ճակատագիրն է բոլոր ազգերու, ըլլան անոնք Պրանսայի կամ Անգլիոյ պէս հզօր ու քաղաքակրթութեամբ մարդկային հսկայ զանգուածներ կամ հայ ազգի նման փոքր հարստահարուած ու ճնշուած ցեղեր:

Իր ազգին զաւակներուն անգառնալի կորուստին առջև իր փառապաշտելի կամ իր թանկարժէք զաւակներուն գոյութեամբ կը պարծի ու կ'սփոփուի Պրանսան:

Միեւնոյն հանգամանքները կը ներկայացնեն ուրիշ ժծն ու զօրաւոր ազգեր, Պոլի կը յաջորդէ Ժոֆրու, Ժոֆրու կուրտ, ու յաջորդաբար. վասնզի քաղաքակրթական ու ընկերային բարձր մակարդակը, որու տիրացած է Պրանսա, կարկառուն դէմքերու անվերջ շարայարուժով մը ուժեղացուցած է իր գոյութիւնը, իր ապագան:

Դիւմանսի, Պոլի, Ժոֆրու պէս փայլուն աստղեր իսպառ կը հեռանայն այն հորիզոնէն որուն շնորհիւ իր Մարին յաղթանակի, Փարիզի պաշտպանութիւնը, Դիւմանսի անպարտելի Լէգէոններու ջախջախումի պէս փառապաշտելի:

Եւ սակայն նորանոր Դիւմանսաներ սպառնալիք կը նետուին միեւնոյն փառալիզ դեմը խաղալու անդիմադրելի նախնաձայնագրութեամբ:

Ինչպիսիք է գիտնալ թէ մենք ալ կը ներկայացնենք միեւնոյն բարեմասնութիւնները: Հայկական ողբալի ու արիւնոտ հորիզոնի հրաժեշտ տուող Դուրեաններ, Պոլոս Նուպարներ, Ուրեշնանցներ, Նուպարեաններ, Չեքազներ, պիտի ունենան իրենց արժանաւոր յաջորդները, որոնց պէտք ունինք մենք բոլոր ազգերէն աւելի: Դժբաղդար պատմութեանը ժխտական է: Հայ հորիզոնը, իր շիջող աստղերուն պակասը լրացնող աստղերէն զուրկ է:

Եւ զուրկ պիտի մնայ որքան ատեն տիրապետեն անհասկացողութիւնը, իրերամարտութիւնը, կու-

տակցական կամ ալ պառակտումներ: Եւ յարգանքի և պարտաճանաչութեան պակասը:

Պրանսայի հետ մենք ալ, ինչպէս նաեւ բովանդակ մարդկութիւնը ողբացինք կորուստը Դիւմանսի, Պոլի և Ժոֆրու: Եւ սակայն Պրանսա կորսնցուցած է ոչ թէ գործը այլ անհատը ու օժտուած է միեւնոյն գործը վարելու ատակ և գիտակ անհատներէ:

Մեզի համար սակայն այսպէս չէ: Դուրեանի, Ուրեշնանցի, Պոլոս Նուպարի հետ վերջացած է նաեւ գործը, քանի զրկուած ենք անոնց պակասը լրացնող ոյժերէ:

Պրանսայի իր երեք աստղերուն կորուստին առթիւ զգացած ցաւը կը հարկադրէ զմեզ ստեղծել միջոցներ, հայ հորիզոնը լուսազարդելու համար Պրանսական հորիզոնի պէս լուսաւոր:

Յ. ՊԱԼԵԱՆ

ՄԱՆԱՓՈՐՁ ԲԱՐԵՐԱՐ Տ. ԲԱՐՍԵՂ ՊԱԼԸԳՃԵԱՆԻ ՎՐԱՅ

«Երբեք» կը կարտատպենք:

Զահէի ազգայիններէն մէկը 1931 Յունուար 4 թուակիր նամակ մը ստացած է Ազգաբնակչութեան Տնօրէն Պալլեգճեանէ, որուն մէջ կը նկարագրէ իրեն դէմ գործուած մահափորձը:

Դէպքը պատահած է հետեւալ պարագաներու տակ: Իհիւ. 16-ին երբ մեծանուն բարերար Բարեգործականի Պիւրոյին մէջ իր գործերով զբաղած էր Տօքթ. Թաշճեանի և Պ. Տօքթ. Առաւելը, և Բէօր Միհրան Մաղման կոչուած երեք հոգի մեկը անհետանալով կը յարձակին յիշեալին վրայ և կը զարնեն բառեցրծներով հրեւնի և թեւերուն, բարերարատար իր կուրծքին ուղղուած զանակի հարուածը կը վրիպի իր ձեռքի շարժումով: Նոյն պահուն ոճրագործները կը յայտարարեն թէ դուն հոս ու հոն նուիրատուութիւններ կ'ընես, կամ մեզի ալ կուտաս և կամ սոյն նուիրատուութիւններդ ուղղակի մեր ձեռքով կ'ընես, հակառակ պարագային կամ պիտի սակիցընենք զեզ և կամ անուաղ երեք ամիս հիւանդանոց պիտի պառկեցնենք:

Տնօր Պալլեգճեան մարդասիրաբար դատարան չէ յանձնած չարագործները:

«Երբեք» իր ցաւակցութիւնը կը յայտնէ ազգ. բարերարին և կը խնդակցի իր ապագան առթիւ:

ՄԷՅ ՄԷԿ ՏԱՐԵԿԱՆ

«LE LIBAN» կը ՆՈՒԻԵՆ

Պ. Ղազարոս Ղալիկեան՝ Բարթիթէն Բօլէի, Դամասկոս:

Պ. Տիրան Դուրեման՝ 15 օրինակ Արաբ երեւելիներուն:

Պ. Յ. Պաղտատարեան՝ 10 օրինակ Արաբ երեւելիներուն:

Բաժանադաբուեցէի

«ԼԻԲԱՆ»-ԻՆ

ԼԻԲԱՆԻ ՊԱՏՄԱՆՈՒԹՅՈՒՆ Թիւ 5

ԶՐԵՇԱՅԻՆ ՍԵՐԸ

Գրեց՝ Մ. ԱՆՄԱԼՈՒՆԻ

Հակառակորդ կուսակցութեան երկտասարդ լիտիւններն մին, խնայելիքներն կը սիրահարի Մեծովեանցի դեռատի տիկնոջ և ամէն գնով կ'աշխատի տիրանալ անոր, բայց ի գործ դրած բոլոր միջոցները ի զուրկ կ'անցնեն և Արմէնուհի կը մնայ միշտ հաւատարիմ ու անկեղծ իր կենսակցին հանդէպ, այսպէսով, յուսահատ սիրահարը կը դիմէ աւելի վատ միջոցի մը. կոտորէ, վերջիվերջալ պառակտման միջոցաւ, փոխան մեծ գուժարի մը, թուսահորեկ Մեծովեանցի, կարենալ գանձարձակ

տէրը դառնալու իր սիրածին, և, պառաւ իբր լաւ խոհարարուհի լաւ նկարագրի տէր կին, զօրուոր յանձնարարականով մը կը զըրկէ Մեծովեանցին: Տարբարաւոր գիտեցողականը, առանց կասկածի, սիրով իր տան մէջ կ'ընդունի պառաւը, խոստանալով լաւագոյն օրէն վարձատրել զինք, եթէ երբէք տեսնէ պառաւին աշխատասիրութիւնն ու մաքուր գործը:

Ամէն ինչ կարգի՛ն էր և վատագի սիրահարին ծրարելը յաջող վերջաւորութեան մը յաղթած պիտի ըլլար, ինչպէս որ ալ եղաւ...

Մեր վերեւ նկարագրածին պէս, Մեծովեանցի բնակարանը անակնկալօրէն այցելող դեռատի գիտեցողականի կողմէ եղած սպառնալիքին տակ, պառաւ խոհարարուհին տեղի տուած և ամէն գաղտնիք խոստովանած էր, ապշութեան մատնելով այրի Արմէնուհին, որը կողմ յաջողութիւններէն խորապէս զգացուած, վայրկեան մը կատաղի մարդոց

պէս փորձած էր պառաւը տեղն ու տեղը խեղդել, բայց չլզային գործիւնէն ընկճուած, մտախորտ, հազիւ ինքզինքը թիկնաթոռին մէջ նետել կը յաջողի:

Դեռատի գիտեցողականի կողմէ եղած լուրջ խնամքին վրայ, կէս ժամ վերջ, այրի կ'ընէ աջերը բացած ըլլալով, կը տեսնէ որ, պառաւին երկու ձեռքերը շղթայուած են: Նէ ինքզինքը կ'ամփոփէ և ոտքի ելնելով, ուժաւորապէս կը պոռայ «Այս ոճրագործ պառաւ անմիջապէս թող հեռանալ մեր բնակարանէն, եթէ ոչ, անոր գանկը ես ինքս պիտի ջախջախեմ, չո՛ւտ, չո՛ւտ տարէք, հեռացուցէք ասկից ու անպատիժ մի՛ թողուք զայն»:

Արմէնուհի հազիւ իր խօսքը աւարտած, զգաց որ շուրջը մարդ չիկար ու մէկ ժամէ աւելի ոտքի և անխօս մնաց:

Այս դէպքէն մէկ շաբաթ վերջ, թերթերը հազորդներն լուրը պառաւին և երե-

տասարդ կրօնականի մը գնդակահարման:

Յիշեալ կրօնականը Արմէնուհի այցելած եկեղեցւոյ նորոնձայ քահանան էր, որու ՀՐԷՆԱՅԻՆ ՍԷՐԸ զինք զղջման... մղած ըլլալով, Աստուծոյ թողութիւնը հայցելու մտօք, գիտեցողական տարազ մի անգամ ընդ միշտ վրայէն նետած ու գործած ոճիւրդ քահանայ համար օրն իրուն կ'աղօթէր... կ'աղօթէր որ՝ պառաւը դադանապահ մնար:

Վ Ե Ր Ձ

ՀԱՅԿ. ԼՈՒՐԵՐ

Պոսթմոնթի քաղաքացիական թիւերը
ձեռնարկած է 1880-1930 շրջանին
համար քաղաքին ընկերական պատ-
մութիւնը պատրաստելու: Այդ պատ-
մութեան մէջ առանձին գլուխ մը
պիտի յատկացուի արեւելեան Հայ,
Յոյն, Ռուս, Սերբական և Ալպա-
նական - քրիստոնեայ եկեղեցիներ-
ու: Այս բաժնին խմբագրութիւնը
յանձնուած է Տօթ. Հ. Ս. ձեռք-
նան:

Շարժանկարի յայտնի Հայ
բեմագիր Պրն. Ռուբին Մամուլեան
պաշտօնի կոչուած է Լուս Անճէլոսի
շարժանկարի մեծ տան մը կողմէ և
սկսած է իր պաշտօնին:

Հայաստանի տասնամեակի
տունը հանդիսանորայէս կատարուած
է Յրէզնոսի մէջ խօսած է «Պայքար»
խմբագիր Ա. Նազար, որ իբրեւ հիւր
կը գտնուի նոյն քաղաքին մէջ:

Ուստի Քաղաքացիական
թիւերը որոշած է քաղաքային մեծ
շէնք մը շինել 50 հազար հոգի տե-
ղաւորելու համար, որ պիտի արժէ
երկու միլիոն տօլար: 21 ճարտարա-
պետական ընկերութիւններ մաս-
նակցած են մրցումի և չորս յառա-
կագիծեր միայն շահած են մրցումը
հաղթական տօլար մրցանակով: Այս
չորս շահողներուն մէջ է հայ ճար-
տարապետ մը, Պ. Գասպար Ռոստի-
կեան:

Նիւ Եօքքի ռատիօկայանէն
ամսույ 10-ին երգած է հայ երա-
ժշտագէտ Յ. Միհրապետի երգչա-
խումբը, հայերէն երգեր:

Գրեթէ մէջ Նոյ. 30 ին
որոշակիներու տան համար տեղի
ունեցած գիտութեան պալատին 150
եզրկատական ոսկի հասոյթ գոյացած
է:

Գահիրէի Ս. Գրեթէ Լու-
սաւորի և կեղծիքին մէջ անցեալ ամ-
սոյն 14 ին կատարուած է հոգեհան-
դեսեան պաշտօնի ի յիշատակ ամե-
րիկացի այն միասնակցներու և գոր-
ծիչներու որոնք Հայոց ծառայած
էին և մեռած զանազան ժամանակ-
ներու մէջ: Արարողութեան ներկայ
եղած է Եզրկատարի Ամերիկեան զեա-
պանը, ընդհանուր հիւպատոսը, ա-
մերիկեան երէցը, գոլէճի և ամե-
րիկեան զաղութէն ներկայացուցիչ-
ներ, որոնք Տօթ. Ուստի խօսք առ-
նելով շնորհակալութիւն յայտնած է:

Կ. Պոստի Պատրիարքարա-
նին քաղաքական ժողովի ատենա-
պետ Պ. Գեորգ Թորոքմեան և Եւ.
Բ. ասանապետը Տօթ. Թիւրքան
հրաժարած են, բողոքելու համար
կրօնական ժողովին դէմ, որ ան-
կարող հայ վարդապետի մը համար
շատ թեթեւ պատիժ մը սահմանած
էր:

Կ. Պոստի ազգային դէմ-
քերէն Արտաշէս Մկրտչեան մեռած է
Միլանի մէջ:

Պ. Գ. ԿԻԼՄԵՆԿԵԱՆ ԲԱՐԵՐԱՐ
ԱՆԴԱՄ Շ. Բ. Բ. ՍԻՈՒԹԵԱՆ
Կը տեղեկանանք թէ Պ. Գ. Կիլ-
պենկեան իր անգամադրութիւնը կա-
տարած է Հ. Բ. Բ. Միւրթեան հա-
զար անգլիական սթրիկին մուտքի
տուրքով մը, որ իրեն կ'ապահովէ
բարեբար անգամայն տոլարներ:

Մ Ա Հ
ՌՈՒԲԵՆ ՈՐԲԵՐԵԱՆԻ

Խոր ցաւով կ'արձանագրենք
մահը բանաստեղծ Ռուբին Որբերեա-
նի, որ տեղի ունեցած է ամսույ 3
ին Նեոլի, իր բնակարանին մէջ:

Որբերեան տասը տարի առաջ
ձիպութիւն եկած էր ընտանիքով
և հաստատուած էր Փարիզ, ուր
նուիրուեցաւ իր զաւակներուն դաս-
տիարակութեան: Կը մեռնի 56 տա-
րու հասակին մէջ, հայրենաբաղձ
բանաստեղծի կարողութիւն:

Ամերիկեան Նպաստամա-
տոյցը (Բըլիֆ) իր գործունէութիւնը
հաշտեցողութիւն ենթարկած է եզրիպ-
տոսի մէջ ալ: Գալստեան և Պէր-
պէրեան վարժարաններու մէջ դաս-
տիարակուող և թիւով 30 որբերու
խնամատարութիւնը ստանձնելու
համար կազմուած է «Որբերու Տիկ-
նանց նպաստամատոյց» մը, Գահի-
րէի բարեգէր հայ շահակներէն:

ՏԵՂ. ԼՈՒՐԵՐ

ԼԻԲԱՆԱՆ

ԲԱՐԻ ԳԱՆՈՒՍՏ

Երկու ամիս է իվեր հիւրաբար
տեղս կը գտնուին Վիեննայի Միսի-
թարեան Հայրերէն Հ. Գեորգ Վ.
Փանչիլեան և Հ. Պոզիկարպոս Վ.
Սամուէլեան:

Ուրախ ենք երկու հայրերը մեր
մէջ վայելելուն:

ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Բ.ԳՕՄԻՍԵՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆՆԵՐՈՒՆ

Որոշմանդի մը համաձայն Բ.
Գոմիսէրութեան մէջ-կարգ մը բա-
րեկարգութիւններ եղած են:

Սոյն որոշմանդի համաձայն
Սուրբի մէջ պաշտօնավարող պատ-
մարկները յետ այսու պիտի
կրեն իրարեկանութիւն: Գոմիսէրութեան
տիտղոսը:

ԱՐԱԲԵՐԵՆԻ ԴԱՆՔԱՑՔ

Բ. ԳՕՄԻՍԵՐՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Բարձր Գոմիսէրութեան մէջ
պաշտօնավարող Ֆրանսացի պաշ-
տօնեաներու, և սպաներու համար
Արաբերէնի մասնաւոր դասընթացք
մը բացուած է:

Մինչև ցարդ 85 պաշտօնեաներ
արձանագրուած են:

ԱՐԿԱՍ

Ալքազարի մէջ, Ժորժ Խալի
անուն լարախաղացը լսողացած մի-
ջոյն վար ինչալով ծանորէն վերա-
ւորուած է:

Թիւրքալը հիւանդանոց փոխա-
դրուած է:

ՄԱՍՆԱԻՐ ՆԵՐՈՒՄ

Բ. Գոմիսէրութիւնը մասնաւոր
ներում շնորհելու համար ուզած է
ցանկը այն բանտարկեալներուն ու-
րոնք բանտին մէջ զոյգուած և բարո-
յականի տէր դարձած ըլլալու նշան-
ներ ցոյց կուտան իրենց վարմուն-
քով:

ՍՈՒՐԻԱ

ԹՈՒՐԲ ՄԱԶԱՐԱՆ ՄԸ

Թուրք Հանրապետութիւնը Բ.
Գոմիսէրութեան զիմած էր ընդհա-
նուր պատերազմին Սուրբի մէջ միւ
նող զինուորներուն ի յիշատակ մա-
հորձան մը կանգնելու համար:

Մ. Բոսսո տուած ըլլալով ար-
տօնութիւնը, մօտերս այս յիշատա-
կարանին շինութեան պիտի ձեռնա-
րար:

Կուր Հալէպի մէջ:

ՊԱՆՏՐՈՒ

Սուրբի մէջ Դեկտեմբերի պահ-
տրօլի հասոյթը 458,873 Ս. Ուր-
եղած է:

ՄԱՀՈՒՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդի էլ Ղազին սպանելներուն
տրուած մահալէնը, Դամասկոսի
Վեռարեկ Ատեան ալ հաստատած
ըլլալով, վճիռը մօտ օրերս պիտի
գործադրուի:

ՊԱՍԼՈՒԹԵՐ ՊԵՐՈՒԹԻ ՄԵՋ

Պապի քի աւերակներու, «Ma-
quette» յուշահանգէսը մեծ յաջ-
ողութիւն ունեցաւ:

Հակառակ օգրու անպաստ
ըլլալուն հաջարակող ժողովուրդի ա-
յցեց Պուրը:

ՅԱՆԿԱՐԾԱՄԱՀ

Դամասկոսի Համիտէ թաղի բը-
նակիչներէն և բերդի զինուորական
փուռին գործաւորներէն Սարգիս Շա-
ղըբեան յանկարծամահ եղած է:

Յետ բժշկական քննութեան
սրտի հիւանդութեան հետեւած ըլ-
լալը հակացուցաւ:

ՎԻՐԱՌՈՐԵԱՆԵՐ

Հալէպի Պապ էլ Ներպա թաղի
բնակիչներէն 2 ընտանիքներուն մէջ
կուր մը պատահեցաւ ձիթաստանի
մէջ և զէնք գործածելով վիրաւորուե-
ցան 6 մէկ կողմէն և 2 հոգի ալ միւս
ընտանիքէն:

Փ Ն Տ Ո Ն Յ Ե Ք

Դիւրութիւն մը ընկելու հա-
մար քերթիս յարգելի համակիր-
ներուն, որոնք ենթ յետ այսու
«Լիբանան» Արաբ հասակա-
նաւորու միջոցաւ ալ ծախել
սալ:

Փ Ն Տ Ո Ն Յ Ե Ք

Փնտեցել ամէն ճեղ
իր նմանը չ'ունեցող

“Բ Ի Բ Բ Ե Բ”

Հոս Կերմանական գաղտնիք

Սուրբի և Լիբանանի

Միակ ներկայացուցիչ

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

10 Սուր - Սուրսօք

Պէլլուր

= 92 =

Շանթըքք որ հմուտ էր նաև քիմիադրութեան,
զետեղեց տուփը սրուակներով խնդրուած սեղանի
մը վրայ, շաքար մը տուաւ, երկուքի կիսեց և մօ-
տեցուց ընդունեցներուն:

— Ոչ մէկ կասկածելի հոտ, յայտարարեց ան:
Սակայն և այնպէս, գրաւ կը դնեմ...

Ոտքի ելաւ, ուղղուեցաւ դէպի պահարան մը
և բացաւ զայն բանալով:

Պահարանը կը պարունակէր ամէն տեսակ դեղա-
գործական սրուակներու շարք մը, որոնց խաբարն-
չիւրը կը կրէր պիտակ մը, ճշգրտով հեղուկը գոր
պարունակէր:

Գաղտնի օտարիւնը սրուակներէն մին առնելով
դէպի սեղանը վերադարձաւ, շինքն պարունակու-
թիւնը կիսով չափ լեցուց իր փորձանակներէն ամե-
նափոքրին մէջ և մէջը նետեց իր փշրած շաքարին
միջոցով:

Ժաք և Գոլէթ կը դիտէին լուսութեամբ:

Շանթըքք իր փորձերը կատարելէ վերջ հա-
մարձակ կերպով յայտարարեց:

— Հիմա, վստահ եմ որ այս շաքարները թու-
նաւորուած են:

Գոլէթ զուստեցաւ, իսկ Պէլլուր գոչեց:

— Աւագալը կը կատարէ իր խոստումը... Ինծ-
մէ յետոյ դուք, և այժմ Ձեր աղջիկը: Ինչ վստա-
խելու... Ինչ անխնայութիւն...

Եւ բարկութեամբ մըմտաց:

— Կարելի է ըսել թէ, ունէ եղանակագործութեան
առջև չ'պիտի ընկնի, նոյնիսկ ամենէն քարշիկին,
շարունակելու համար իր գործը և զերծ միայն հա-
մար պատիժէ:

ԴԻՆԵՑԷՔ ՄԻԿԱՐԷԹ ՄԱԹՈՍԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Համեմատական Դաւանակցութիւն

Համեմատական դաւանակցութեան հարց ուսումնասիրող
յանձնաժողովին անդամակցող 27 պետութեանց ներկայացուցիչնե-
րէն՝ որոնք ամսույ 16-ին պիտի գումարուին Ժընէվի մէջ՝ Մ. Պրի-
անի նախագահութեան ներքեւ, 22րդ արաքին գործոց նախարարներ
պիտի ըլլան: Անոնցմէ 7ը Ազգաժողովին անդամ պետութեանց կը
պատկանին՝ Մ. Մ. Պրիան, Մարիմոֆիչ, Քիւրդիուս, Կրանցի, Հօ-
վիմէլ (Նորվեգիա), Հէնքըսըն և Զալտի:

Ֆրանսական խորհրդարանին մէջ

Նորհրդարանին 1931ի նստաւարանը բացուեցաւ: Ծեռա-
կոյսի եւեց անդամը դամբանակարն նաւ մը խօսեցաւ հանգուց-
եալ ժօժի մասին: Մ. Սթէի յանուն կառավարութեան ձայնակեց-
ցաւ անոր եւ ժողովը պահ մը գաղտնեցաւ: Եր քիսը բացուեցաւ
220ի դէմ 261 ձայնով ընկերվարական Մ. Քրիսթիան Պոլիսոն Ե-
րեւիտիանական ժողովը նախագահ ընտրուեցաւ: Մ. Մօնէլ՝ ձախ
հանրապետական, Մ. Հանրի Բաթէ՝ ձախակողմեան անկախ եւ Մ.
Լէօն Պոլսոն՝ արմատական ընկերվար փոխ նախագահ ընտրուե-
ցան:

Զէնընկեցութեան Ընդհ. Խորհրդաժողովը

Ազգերու խորհուրդին Յանձնաժողովը որոշած է որ Զէն-
ընկեցութեան ընդհանուր խորհրդաժողովը գումարուի 1932 փետր-
ւար 15-ին:

Գերմանիա խաղաղասէր է

Ժողովրդային կուսակցութեան պետ Մ. Տիմկէյի կուսակ-
ցութեան ժողովին մէջ խօսք տուելով յայտարարեց թէ Գերմանիա
փափաճող չէ փոխ-վրէժի պատերազմի եւ թէ ան փափաճող է
ամէն պետութեանց հետ ալ խաղաղ գործակցութեան մէջ գտնուի:

Հէնքըսըն - Պրիան Տեսակցութիւն

Անգլիոյ Արաքին գործոց նախարար Մ. Հէնքըսըն Բա-
րիզ ժամանելով այցելութիւն մը տուաւ Մ. Պրիանի, որուն հետ մէկ
ժամ տեղը բարեկամական տեսակցութիւն մը ունեցաւ, եւ միասին
կարծեաց փոխանակութիւն մը ունեցան՝ Ժընէվի Ազգաժողովին
մէջ վիճաբանութեան առարկայ խնդիրներու շուրջ:

Վատիկանի Բնակչութիւնը

«Թիպուցա» կը հրատարակէ Նոյեմբեր 30-ին Վատիկա-
նի մէջ տեղի ունեցած մարգահամարին արգիւնքը: Վատիկանի Բա-
ղաւաքներուն քիւն է 639, որմէ 405ը իսպաղի, 118ը գոլիցերիա-
ցի, 8ը ճեռնացի, 8ը գերմանացի, 3ը սլաւոնացի, 2ը ֆոլմպիա-
ցի, 1ը եթովպացի, 1ը ռուսիացի եւ 1ը աւստրիացի:

= 89 =

աղջամուգջներէն, որոնց մէջ կը պայքարինք:

Նախ երկու պարագա ստուգեցինք:

Առաջինը թէ՛ Պէլլուր ատանձնացած ոճրա-
գործ մը չէ. և թէ Նոյնիսկ արքանականներ ունի,
որոնք պատրաստ են կատարելու ամէն ինչ որ հրա-
մայէ:

Միմէ չը համոզուեցա՞ք, սիրելի բարեկամս, ձեր
վրայ կատարուած յարձակումն:

— Ժիշտ է:

— Յետոյ, բացայայտ ու անհիւքիլ փաստը
չ'ունինք մեր ձեռքերուն մէջ թէ՛ Պէլլուր կ'աշ-
խատի, ձեր տեղը անցնիլ:

— Համաձայն եմ:

— Շատ լաւ: Եթէ կ'ընդունիք ինծի աշխատակ-
ցիլ, կը վստահեցնեմ Ձեզ թէ շատ չ'անցած ձեռք
պիտի անցունենք Պէլլուրէն և իր խումբը:

— Ինչ պէտք է ընեմ:

— Անյայտանալ:

— Անյայտանալ. գոչեց Պէլլուր: Անկախ ինչ է
ապիկա:

— Կամ մահաւանդ հոս բնակիլ, աչքէ հեռու:
Ինչ անյայտացում մը ինծի պիտի ծառայէ ծու-
ղակ մը լարել Պէլլուրէն, որուն մէջ չ'ալտի խուսա-
փի ինչալէ:

Անշուշտ գուք ալ պիտի օգնէք ինծի այդ առա-
ջակը ձեռք անցնելու համար:

— Հաւատացե՛ք որ չ'ապապանք երջանիկ և հը-
պարտ պիտի ըլլամ ձեզի գործակցիլ, սակայն ձեր
առաջարկը ընդունելու իրաւունք ունիմ վարանելու:

— Եւ ինչո՞ւ:

— Ի՞նչ անցյալանալու տեղակ մը փափաքուտ տալ:

Գերմանիա-Լիբ. խորհրդաժողովին
Լիբանանի քիմիադրութեան
Շանթըքք իր փորձերը կատարելէ վերջ հա-
մարձակ կերպով յայտարարեց:

Նոր ձեռքակալուած աղանդաւորներ

Հասկցուած է որ Պոլիս, Էյիպ ՆԱՔՇԻ Էյիպ Ապսուլլահի առակերներն են Հալիլ օղլու Հիւսէյին, Հաճըզ Հասան, Ապարա-վանաւ Բաշիս եւ լազ Մուսթաֆա, որոնք Ազնիսարի մէջ իրենց աղանդը քարոզելուն համար ձեռքակալուած են Մէնէմէնի պատե-րազմ. ասեանքն որչափ տեսնուած են: Այս մարդիկը կարեւոր խոստովա-նութիւններ քրտն են: Միեւնոյն ասեմ այս մասին կարեւոր փաս-տաթուղթեր ալ գտնուած են:

Էսկիեքեմի մէջ ձեռքակալուած երեք անձերը երէկ գիշեր Մէնէմէն քերուեցան: Այսօր պիտի հարցաքննուին: Երէկ ալ Ալի աղա ապարապէն Իսհան օղլու Էօմէր անուն հոգա մը բերուեցաւ:

ՏՈՒՆԷՔ ԶԵՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ «ՂԻՔԱՆԱՆ»ԻՆ

Կրէկուար Մէլիքեան

ՊԱՊ ԻՏՐԻՍ ԹԻԻ 205

Փօստիւրաճ եւ քաղաքի ամէն լեզուով

Հուսանկարչական գործիներ, ժամացոյցներ եւ գրի մեքենաներ

Նմանապէս կը նորոգէ ամէն տեսակ գրի, հաշիւի եւ

Հուսանկարչական մեքենաներ

ՓՆՏՈՒՅԵՔ ԱՄԷՆ ՏԵՂ

Մարտեան ամիսը նոր քաղաքաւորեան հանած 5 դր. նոց
Սիկարեքները որոնք թէ համով եւ թէ հոսով կը գերազանցեն
Ի ր Ե Ն Գ Ն Ե Խ Ո Ր Գ Ն Ե Ր Ը

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Ճաշարան Բէլվէյ Էլ Շարֆ

ՏՆՕՐԷՆ՝ ԺՈՁԵՔ ԽԱՆԻ

ՊՈՒՐՁԻ ԶԻՐԱՊԱՐԱՆՈՒՆ ՎՐԱՅ

Արեւելեան եւ Եւրոպական ընտիր կերակուրներ

Պատրաստուած զուտ եւ քաւմ իւղով

Գինեք՝ չափաւոր եւ դիւրամասշտկ

Ընտանիքի եւ ուսանողներու ապօրոգիաներ կ'ընդունի:

ՏՕՔԹ.Ա.ԳՈՒՅՈՒՄՇԵԱՆ

ՎԿԱՅԵԱԼ ՄԱՍՆԱԳԵՏ

Ներքին, կանանց, մանկանց, աչքի եւ վնասեալ հիւանդութեանց

ՎԵՐՋԻՆ ՄԷՔՈՏՆԵՐՈՎ ԿԸ ԳԱՐՄԱՆԷ

Հին եւ նոր ջերմամիզութիւնը, Սիւնիւթը,

Հիմքաքքի օրերը արի

Իր դարմանասունը կը գտնուի Սէն Լուի փողոցը (Երեւան)

= 85 =

Հէ՞ թշնամիին անշն:

Ասիկա գրականութիւն է, սիրելի լրագրերս, պա-տասխանեց Շանթըք զուարթութիւն:

— Կը խոստարիմ ձեր համարեանս եւ փաստե-րունս անշն:

Պ. Շանթըք, քանի որ կ'ուզէք Պէլքէօրը ծուղակը ձգել, աւելի նախադրելի է որ ինձ մեռած կարծէ քան թէ կենդանի:

— Լաւ կը տրամաբանեք, մէջ բերաւ հոգեկա-ւոր գաղտնի ուստիկանը:

— Ի՞նչ պիտի ըսեն սակայն բարեկամներս:

— Երբ որ գիտնան ձեր անյայտացումին պատ-ճառը անոնք առաջինները պիտի ըլլան ձեզ ներող:

— Կարելի է: Բայց լրագրերս կայ... պարտաւոր եմ անոր...

Շանթըքը առաւելց:

— Սակայն այս կերպով լրագրական այն դգա-յացունց լուրերէն մէկը չէ՞ որ կը պատրաստէք, զոր ընդհակառակը ձեր տնօրէնին շնորհակալութեանց պի-տի արժանացնէ ձեզ:

— Բայց միթէ իրաւունք պիտի չունենա՞յ զիս յանդիմանելու, իրեն հանդէպ այդքան գաղտնապա-հութեամբ վարուած ըլլալուս համար:

— Ձեր տնօրէնը վստահ եմ որ չը պիտի ցաւի ատոր համար:

— Ինչ որ կը պահանջէք ինձմէ շատ ծանր է...

Խորհելու պէտք ունիմ:

Շանթըք, յօնքերը թեթեւօրէն պոստած, նա-յեցաւ իր աղջկան, որ վերստին մասնագետ չէր...

Երբ դուռը զարկին:

— Մտէ՛ք, գոչեց գաղտնի ուստիկանը հակիրճ

Գ Ո Ր Ծ Ա Ծ Ե Ց Է Ք

Նաղուպեան եղբարց եւ Գապարի Բնկի ութեան Ոռոշա-պահական, ինքնաբերական պատրաստութեամբ եւ դիւրագին սիկարեքները, որոնք օժտուած են անմրցելի առաւելութիւններով: Դամասկոսի միակ Հայկական Սիկարեքի Գործարանը կատարելագոյն գոհացում կուտայ ձեռքներէն:

Դիմեցէ՛ք, Դիմեցէ՛ք, Դիմեցէ՛ք
ՆԱՂԱՊԵԱՆ ԵՂԲԱՐԲ ԵՒ ԳԱՊԱՐԻ ԲՆԿԻ

Հասցէ, ՀԱՐՔ-ԷԼ-ՋԵՑՆ Թիւ 2 Տամակոս

ԿԱՐԱԺ ՕՐԻԱՆԹԱԼ

ԹԱՊԻՊԵԱՆ ԵՂԲԱՐԲ

Իրենց սեփական կարածի մէջ կը նորոգեն, կը ներկեն եւ իրենց նախնական վիճակին կը վերածեն ամէն տեսակ օթօներ եւ երկաթէ գոր-ծիքներ:

Կը կատարուին օթօններու լուսացք անոնց համար տրամադրելով գի-շեր ցերեկ սպասելու տեղ:

ՅՈՅԺ ԳԻՐԵՄԵՏԶԻՆ Ի ԳԻՐԵՐ

ԽՂՃՐԻՍ ԵՒ ՆՇՂՐԻՍ ԳՈՒՇ

Առանց վարանումի դիմեցէ՛ք ու գոհացում պիտի գտնէք:

Հասցէ.— GARAGE ORIENTAL, TABIBIAN FRERES

Rue el Arz (Saifi), Beyrouth

24—21

ՏՊԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆ

Պուրճ — Իթալի փողոց Թիւ 9 — Պէյրութ

Կը պատրաստուին՝

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԻՏՈՑՔՆԵՐ.— Տետրակ, Դիրք (գլխաւորական, գրա-կան ու վիպական):

ՀԱՅԵՐԷՆ ԶԻՐԱՍԵՐԷՆ ԵՒ ԱՐԱՅԵՐԷՆ.— Լեզուներով. կատանձնէ Տպագրական կամ Հրատարակական, ամէն տեսակ գործեր երեք լեզուներով, նաեւ առեւտրական ամէն տեսակ գործեր ինչպէս նաեւ Հարսանեկան Հրատարակութիւններ

ՏՈՒՓԻ ԳՈՐԾԱՏՈՒՆ

Կը պատրաստուին: Շաքարի, Լօզումի, Շօքօլաթի, Կօշիկի, Դիւղարա-նի, Շապիկի ԱՄԷՆ Տեսակ տուփեր քաղաքի եւ պատկերներ:

Յոյժ դիւրամասշտկի պայմաններ եւ խնամակալութեամբ գործ:

ԱՅՅԵԼԵՑԷՔ ԵՒ ԳՈՂ ՊԻՏԻ ՄՆԱՔ

Պէյրութի մէջ ամէն ազգէ հանչցուած եւ փնտրուած

առաջնակարգ հայ կօշիկաւորներ

ԺՕՐԺ ԱԹԱՐԵԱՆ

ՍՈՒՓ ՍԱՅՈՒՐ ԹԻՒ 18

Չափի վրայ կամ ապսպրանքով. կատարեալ ճշտապահութեամբ ու խղճմտանքով կը պատրաստէ Արանց, Կանանց եւ Փոքրիկներու,

Ամէն տեսակ նորածէ, լիւքս եւ ֆանթէզի կօշիկներ:

= 88 =

Թօնով մը:

— Յանձնակատար մէկ օր'իքնաւ նախ ծրարը ջը: Գօլթին համար, ըստ Մառի — Ժանը, ծրարը երկա-րելով երկտասարդ աղջկան:

Գօլթի ժպտուն դէմքով ուղղուեցաւ դէպի Պէլ-կարտ եւ անոր ներկայացնելով շօքօլաթի գեղեցիկ տուփ մը որ բռնած էր ձեռքին մէջ ըսաւ:

— Պ. Պէլկարտ շատ շնորհակալ եմ:

— Օրիորդ կը սխալեք, ես չեմ այդ տուփը ձեզ դրկողը:

— Եւ այս քարդը... դիտել տուաւ գաղտնի ու-տիկանին աղջիկը:

Եւ Գօլթի լրարեքին երկարեց բարակ քարթ մը որուն վրայ տպուած էր սա անունը:

ՓԱՔ ՊԵԼԿԱՐՏ

36 Տ'Անթէն պողոտայ

Չափազանց զարմացած, լրարեքը ուժգնօրէն հա-ւաստեց:

— Օրիորդ, պատուի խօսք կուտամ ձեզ, թէ ուէ կապ չունիմ այդ շաքարներուն առաքումին հետ, սակայն ինչպէ՞ս կըլլայ որ քարթը զարմանա-լիօրէն կը նմանի իմ գործածածին:

Շանթըք, որ ամէն ինչ լսած էր, գոչեց:

— Ո՛հ ատիկա, արդեօք քաղաքացի Պէլքէօրը կրնայ ըլլալ...

Կանգ առաւ ան, առաւ տուփը, եւ պարզապէս ըսաւ Գօլթիին եւ Պէլկարտին:

— Հետեւեցէ՛ք ինձի:

Ուղղուեցաւ դէպի իր աշխատանոցին խորը եւ դուռը մը քանդով ներս մտաւ աղջկանը եւ չորսր-դին հետ:

ՆԵՏԱՔՐԲՐԱԿԱՆ ՆՕՐԵՐ

ՌՈՒՍԻՈՅ ՆՕՐ ՕՐԱՑՈՅՑԸ

1930 Հոկտեմբեր 1 էն սկսեալ ամբողջ Ռուսիոյ մէջ սկսած են նոր օրացոյց գործածել:

Ըստ այս տարեցոյցին շաբաթը 5 օրի եւ տարին 73 շաբաթներու բաժնուած է:

Գործարաններու եւ Կրթական հաստատութեանց 4 օր աշխատանք եւ 1 օր հանգիստ յատկացուած է:

Միւս բանւորներու համար շա-բաթական հանգիստի օրէնք օր չէ նը-շանակուած, անոնք հերթով ու է օրուան մէջ պիտի կրնար հանգըս-տանալ:

Կիրակի եւ կրօնական օրերը շըն-ջուած են, բացի Մայիս 1-ը որ Աշ-խատանքի օրն է, 2 Նոյեմբերը որ Յեղափոխութեան տարեդարձի եւ 23 Յունիսը որ Լէնինի մահուան տա-րեդարձի օրերն են:

ԱՆԹԵԼԻ ՇՐԱՇԱԼԻՔ

Դեկտ. 14 Վիեննայի Ռատիօկա-յանը կը հաղորդէր Պուրէշ-Վիեննայի քաղաքացիներուն սրտի բարխու-մը, շնչառութեան գործարաններու շարժման եւ բոյսերու անցման ձա-յները: Երբ դարեցաւ մարդկային սր-տի զարկերակներու ձայնի հաղոր-դագրութիւնը, Վիեննայի բնախօս-ներն ու ճարտարագէտները ուստի-մի միջոցաւ սկսան հաղորդել Պուր-շէշ Վիեննայի աղանթի ու մուկի սրտերուն զարկերը:

Անթելի այս հրաշքը հնարաւո-րութիւն կ'ընծենէ Կիւսնիներու կապ հաստատել թփուկներու հետ, խոր-հրդակցել ու հրահանգներ ուսանալ ու նաեւ քննուել անթելի միջոցաւ:

ՍԻՆԷՄԱ ՔՐԻՍԹԱԼԻ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Երկուաքքի օրէն սկսեալ սինէմա Քրիսթալի մէջ պիտի ներկայացուի Համաժամօր դե-րասան Տիափօյի կողմէ ՓՈՑԵ-ՐՈՒ Մէջ արկածալից տամբ:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

«Լիբանան»ի յարգելի բա-ժանորդներէն կը խնդրուի իրենց բաժանորդագրութեան հաշիւը մաքրել:

Ատամնաբոյժ

ՏՕՔԹ. ՄԱՐՏԻՐՈՍ ՊԱՐՈՆԵԱՆ

Կատարեալ խղճամտութեամբ կը բարձրանէ. ԱԿՈՒՅԻ Ե ԲԵՐՆԻ հիւանդութիւններ, եւ կը ծինէ ոսկիէ ոսկրէ ամէն տեսակ ակոսներ:

Հասցէ՝ ՐԻԻ ԲԱՍՔԷՐ

Պէյրութ (Նիւ Իսթ Լիկի Կից)

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

— Պ. Մանուկ Կէօկճեան. — Ձեր թերթին բաժնեգիրը եղող 500 ւ. դ. պարտքը փութացուցէ՛ք:

— Պատուելի Տէվրեան. Պէյ-րութ. Հաճեցէ՛ք թերթին 1919-1930 տարուան բաժանորդագրութեան փոխարժեքը եղող 600 Ս. դա՛ւ ք փու-թացնել խմբագրութեանս:

ԼԻԲԱՆԱՆ ՎԸ ԾԱԽՈՒԻ

Անանեան Գրատուն Պէյրութ

Մ. Նաճարեան « Նահր

Տօնիկեան Գրատուն « (Բէմբ)

Բարսեղ Շահինեան Դամասկոս

ՄԻՒ ԲԱՅԱԼԵՐԷՐ

ՋՐԻ ԹԵՐԹ ԿԱՐԴԱՑՈՂՆԵՐԸ

ԿԱՐԴԱՑԷՐ

ԵՒ ՏԱՐԱԾԵՔԷՐ

«ՂԻՔԱՆԱՆ» ՀԱՅԱՔԵՐԸ